"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА" ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET NATIONAL ACADEMIC THEATRE NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 877-L

«30» դեկտեմբերի 2021 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 455-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ժա) ենթակետի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի, ՀՀ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի N 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Թատրոն) կանոնադրության 25-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառած վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները՝

հրամայում եմ.

1. Սահմանել Թատրոնի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատմանը:

2. Հաստատել Թատրոնի հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Թատրոնի տնօրենի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի ««Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը սահմանելու, հաստիքացուցակը հաստատելու և տնօրենի 2020 թվականի օգոստոսի 27-ի N 389-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 455-Լ հրամանը:

4. Թատրոնի մարքեթինգի և ՓիԱր բաժնին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

5. Սույն հրամանը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Թատրոնի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ **Կ. Դուրգարյան**

ք. Երևան
«30» դեկտեմբերի 2021 թ.